ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 19 » մարտ 2026թ. No 1422 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 01/1399-26 առ 16.03.2026թ. փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Ընդհանուր հիմունքներով գրանցման ընթացակարգով գրանցել թվով 2 դեղը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության

կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5.Դեղի գրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2026 թվականի մարտի «19 » - ի  N1422 - Ա հրամանի

# Գրանցված դեղերի ցանկ

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Նատրիումի Քլորիդ ներերակային կաթիլաներարկման (0,9% կ/ծ) | նատրիումի քլորիդ | լուծույթ ն/ե կաթիլաներարկման | 9մգ/մլ; 100մլ պլաստիկե 22իկ եվրո-գլխիկով, 500մլ պլաստիկե 22իկ եվրո-գլխիկով, 100մլ պլաստիկե 22իկ պտկաձև գլխիկով, 250մլ պլաստիկե 22իկ պտկաձև գլխիկով, 500մլ պլաստիկե 22իկ պտկաձև գլխիկով | Օթսուկա Ֆարմասյութիկալ Ինդիա Փրայվիտ Լիմիթիդ, Սըրվեյ No. 188, 194, 195, Պաիկի 1 & 2, 199/1, 200/1, 201/1, 199-201 & 208-210, գ.Վասանա Չաչարվադի, Տալ. Սանանդ, շրջան Ահմեդաբադ, 382213 | Հնդկաստան | Օթսուկա Ֆարմասյութիկալ Ինդիա Փրայվիտ Լիմիթիդ, գ.Վասանա Չաչարվադի, Տալ. Սանանդ, շրջան Ահմեդաբադ, 382213 | Հնդկաստան | Դ | 23949 16.03.2026 |
| 2 | Ինդոտրեքս | ցետրորելիքս (ցետրորելիքսի ացետատ) | լուծույթ ե/մ ներարկման | 0,25մգ/0,5մլ; նախալցված ներարկիչ 0,5մլ | Գուֆիկ Բիոսցիենսիս ՍՊԸ, Ն. Հ. No. 8, Նեար Գրիդ, Կաբիլպոր-396424, Նավսարի, Գուջարատ | Հնդկաստան | Գուֆիկ Բիոսցիենսիս ՍՊԸ, 1ին-4րդ հարկ, Ս.Մ. Հաուս 11 Սահակար Ռոադ, Վիլլե Պարլե (Իսթ), Մումբայ-400057 | Հնդկաստան | Դ | 23950 16.03.2026 |